ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ

h/h	Գույքի հասցեն /գտնվելու վայրը/	Գույքի մակերեսը	Վարձակալության տրամադրման ժամկետը	Պարտադիր պայման	Մեկնարկային գինը (վարձավճարի չափը 1 ամսվա համար) դրամ
Աճուրդով վարձակալության տրամադրվող գույք					
1	Նալբանդյան 43/3 ստորգետնյա անցում	337.09	10 տարի	Աճուրդի հաղթողը պարտավոր է ապահովել ստորգետնյա անցման բարեկարգումը, սան. մաքրումը, ընթացիկ վերանորոգումը, ինչպես նաև անցուղիների լուսավորության ապահովումը (այդ թվում գիշերվա ժամերին)	235,000

Աճուրդին կարող են մասնակցել իրավաբանական և ֆիզիկական այն անձիք, ովքեր Երևան համայնքի բյուջեյի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն։

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում ***WWW.YEREVAN.AM.***

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտիի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173)։

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը։

Աճուրդը կայանալու է 2014թ օգոստոսի 28-ին ժամը16-ին , ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեում։

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2014թ .օգոստոսի 28-ը, ժամը14-ը։

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ